ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ՝ 03.07.2013 ԹՎԱԿԱՆԻ N *«112760054 S4002»*
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան **« » « »«2020»**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս. Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՎԵՈՆ-Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս լիազորված անձ Էդուարդ Խանզրադյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 03.07.2013թ. N «112760054 *S4002*» պայմանագրի 6.4 կետը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի շրջանակներում վաճառողը ստանձնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

1.2 Սահմանել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի սպասարկման տեխնիկական բնութագիրը համաձայն հավելված 1-ի:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի սպասարկման ծառայությունների սակագինը սահմանվում է ամսեկան **74800** (յոթանասունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որը ենթակա է փոփոխության, կախված Գնորդի կողմից նոր ծառայությունների մատուցման պահանջից:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույ համաձայնագիրը կազմված է 1 էջից, Համաձայնագրով հաստատված Հավելվածներ՝ 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը և սույն Համաձայնագրով հաստատված Հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«ՎԵՈՆ-Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական տուն 3	ք. Երևան, Ազատության 24/1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011001337	Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 02500052
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Լիազորված անձ՝
..... Ս. Մաչյան	..... Է. Խանզրադյան
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ. /ստորագրություն/

Digitally signed by TER-BALYAN VAHRAM 2003680118
Date: 2020.07.31 15:51:51 AMT

Digitally signed by KHANZRADYAN EDUARD 1807790185
Date: 2020.07.31 17:25:20 AMST

Հավելված 1
03.07.2013 թվականի N «112760054 S4002»
ծածկագրով պայմանագրի Համաձայնագիր 2-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գիծ ծառայության համար նախատեսված Վիրտուալ ԱՀԿ ծառայությունների մատուցման

Ծրագրային ապահովման համար սահմանվող նվազագույն պահանջները.

- Մուտքային զանգերի սպասարկում,
- 30 գծի ապահովում (հետագայում փոփոխելու հնարավորություն)
- Ելքային զանգերի հնարավորություն ֆիքսված և բջջային հեռախոսահամարներին
- Բոլոր զանգերի միաժամանակյա սպասարկում
- Երկրորդ գծի հնարավորություն զանգի սպասման ռեժիմում
- Հեռախոսազանգի հնարավորությունը ինչպես հեռախոսներով, այնպես էլ համակարգչի միջոցով՝ ականջակալների օգտագործմամբ և սմարթֆոններով
- Հեռավար աշխատելու հնարավորություն
- Ներքին հեռախոսահամարներ միացնելու հնարավորություն
- Ձայնային մենյու IVR-ի հնարավորություն՝ հետագայում ձայնագրությունները փոփոխելու(նաև ավելացնելու) հնարավորություն
- Զանգերի ձայնագրությունների պահպանում և ներբեռնում,
- Զանգերի որակի գնահատման համակարգի ստեղծում,
- CRM կամ Ticket ծրագրի հետ ինտեգրման հնարավորություն,
- Չպատասխանված զանգերի գրանցում՝ ինքնաշխատ եղանակով հետզանգ
- Իրական ժամանակում զանգի մոնիտորինգ,
- Տվյալների փնտրման և ֆիլտրման հնարավորություն ցանկացած պարամետրի (կրիտերիայի) միջոցով՝ ըստ կատարողի, վերնագրի, կարգավիճակի, զանգի պատճառի, ժամանակի և այլն,
- Զանգերի հերթի ստեղծում, սպասման ռեժիմի միացում, ավտոմատ կերպով սպասման ժամանակի ծանուցում ծրագրում հասանելի մյուս օգտատերերին,
- Ըստ աշխատակցի կարգավիճակի զանգերի բաշխում խմբի ներսում,
- Զանգը փոխանցելու հնարավորություն,
- Ծրագրային հարցերի սպասարկում:

**համաձայնագրով նախատեսված թեժ գծի հեռախոսահամարն է՝ 060-83-11-14, իսկ բջջային հեռոսագծի համարը՝ 096831114:*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«ՎԵՈՆ-Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական տուն 3	ք. Երևան, Ազատության 24/1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011001337	Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 02500052
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Լիազորված անձ՝
..... Ս. Մաչյան	..... Է. Խանզրադյան
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված 2
03.07.2013 թվականի N «112760054 S4002»
ծածկագրով պայմանագրի Համաձայնագիր 2-ի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գիծ ծառայության համար նախատեսված Վիրտուալ ԱՀԿ ծառայությունների մատուցման

Ծառայության տեսակ	**Քանակ**	**Բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ**	**Քանակ**	**Ամսական գումար ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ**
Ոչ աշխարհագրական կոդով ֆիքսված կապ	հատ	3500	1	3500
1 բջջային հեռախոսագիծ	հատ	300	1	300
Բազմակապուղային համար (Multichannel)	հատ	2000	30*	42000
Ձայնային մենյու (IVR)	հատ	3000	1	3000
Զանգերի ձայնագրում	հատ	1500	10	15000
Զանգերի բաշխում	հատ	1000	10	10000
CRM ինտեգրացիա	հատ	1000	1	1000
Կարճ համարներ և կոֆերանս զանգ	-	Անվճար	-	-
Ընդամենը				74800

***Յուրաքանչյուր 10 բազմակապուղային համարից 3 հատը տրամադրվում է անվճար:**

ԳՆՈՐԴ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011001337
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

..... Ս. Մաչյան

Կ.Տ. (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«ՎԵՈՆ-Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ՝ 02500052
Լիազորված անձ՝

..... Է. Խանզրադյան

Կ.Տ. /ստորագրություն/